ՓԱՎՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ԲԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ Ռ. Ա.

V դ. պատմիչ Փավստոս Բուզանդի «Պատմություն Հայոց»[1] երկը բացառիկ արժեք ունի հայ պատմագրության մեջ: Այն եզակի սկզբնաղբյուր է ոչ միայն Հայաստանի, այլև Մերձավոր Արևելքի երկրների, մասնավորապես Սասանյան Պարսկաստանի և Բյուզանդական կայսրության պատմության ու մշակույթի ուսումնասիրության համար: Բուզանդի աշխատությունը հարուստ է ազգագրական արժեքավոր նյութերով, որոնք ընդգրկում են հայ ազգագրության գրեթե բոլոր ոլորտները՝ նյութական և հոգևոր մշակույթ, կենցաղ, ընտանեկան-հասարակական կապեր և այլն:

Բուզանդի «Պատմություն Հայոց»-ում արժեքավոր հիշատակություններ կան նաև վաղ միջնադարյան Հայաստանում, մասնավորապես Արշակունիների թագավորության ժամանակաշրջանում պետական կառավարման համակարգի, համայնական հարկատվության, բանակի սպառազինության, մարտական որակների և այլնի վերաբերյալ: Այս խնդիրների հետազոտությունը թույլ կտա համակողմանի պատկերացում կազմել տվյալ ժամանակաշրջանում պետական կառավարման համակարգի կառուցվածքի, այն իրականացնող ստորաբաժանումների գործառույթների, երկրի անվտանգությունը և պաշտպանությունը կազմակերպելու եղանակների և բազմաթիվ այլ հարցերի մասին:

Պատմիչի հավաստմամբ՝ երկրում արքայից հետո բարձր դիրք էին գրավում բդեշխները և նախարարները: Օրինակ՝ Աղձնյաց մեծ իշխանը, որ բդեշխ էր կոչվում, արքունական սեղանի չորս բարձրագույն գահերից մեկն է գրավում (III դպր., գլ. Թ, էջ 37): Արքունիքում ժառանգաբար նրանց էին փոխանցվում իրենց համար նախատեսված «գահերը» կամ «բարձ ու պատիվները»: Գահնամակում սահմանված էր յոթանասուն նախարարական տան տեղ: Չորս բդեշխները (Աղձնիքի, Կորճայքի, Նոր Շիրականի, Գուգարքի) դուրս էին այդ ցուցակից, քանզի նրանք գրեթե անկախ, սահմանապահ փոքրիկ թագավորություններ էին հայոց պետականության կազմում: Սակայն պարտավոր էին երկրի գերագույն տիրոջը՝ արքային, տված հավատարմության երդումը անխախտ պահել, նրան ռազմական, վարչական և այլ ծառայություններ մատուցել: Անտրոհելի սեփականությամբ և արքու-նի պաշտոնները ժառանգաբար փոխանցելու իրավունքներով էին օժտված նաև երկրի

---

[1] *Տե՛ս* **Փավստոս Բուզանդ,** *Պատմություն Հայոց, թարգմանությունը և ծանոթագրությունները Ստ. Մալխասյանցի, Ե., 1989 (աշխատության աշխարհաբար թարգմանությունից ենք օգտվել՝ գիտական հանրությանն առավել մատչելի ներկայացնելու համար): Այս գրքից արվող մեջբերումների էջերը կնշվեն բնագրին կից:*

«գավառապետ», «աշխարհատեր» նախարարները: Նրանք, ըստ «Գահնամակ»-ի և «Զորանամակ»-ի, ունեին նաև որոշակի թվով զորք պահելու իրավունք: «Եվ Հայաստան աշխար- հի թագավորությունը (նկատի ունի Արշակ II-ի գործունեությունը – Ն. Ռ.) նորոգվեց ու պայծառացավ ինչպես առաջ. մեծամեծներն իրենց գահերում, գործակալներն իրենց աստիճաններում» (IV դպր., գլ. Բ, էջ 107):

Փ. Բուզանդը հիշատակում է արքունական մի քանի պաշտոններ, որոնք ազգագրական հետաքրքրություն են ներկայացնում: Նախ՝ պատմագիրը բավական հստակ ներկայացնում է արքունական գործակալությունները, որոնք «ինը հարյուր բարձ էին կազմում, որոնք թագավորական սեղանի ուրախության մասնակից էին լինում, բացի ոտնկա սպասավորության պաշտոնյաներից» (ն. տ.): Դրանք երկրի միապետի՝ թագավորի ներկայությամբ «ենթակա աստիճանի գործակալներն էին, որոնք արքունական գահի բարձերի վրա բազմում էին, պատիվները գլխներին, չհաշվելով մեծամեծ նահապետներին ու տանուտերներին» (ն. տ.): «Թագավորի մոտ ժողովի գումարման ժամանակ ներկայանում էին նախարարական տների մեծամեծ նախա- րարները, գնդերի և դրոշակների տերերը, բոլոր սատրապները (աշխարհապահ, երկրապահ բդեշխները, գավառների կառավարիչնե- րը – Ն. Ռ.), նախարարներն ու ազնվականները, պետերը, իշխանները, զորավարներն ու սահմանապահները» (ն. տ.):

Հազարապետը, ըստ պատմիչի, երկրի տնտեսության և հարկերի, շինարարական աշխատանքների գլխավոր տեսուչն էր, ուստի և նրա իշխանությունը տարածվում էր շինականության՝ գլխավոր հարկատու դասակարգի վրա: Բուզանդը նրա պաշտոնը անվանում է աշխարհատես խնամակալություն, որի համար նրան որակում է «շինականաշէն» մակդիրով (ն. տ.): Փ. Բուզանդի ասելով՝ այս պաշտոնը ևս ժառանգական էր և պատկանում էր Գնունյաց տոհմին: Արշակ թագավորը (350-368) առաջին գործակալ-հազարապետ նշանակեց «շիններին շենացնող Գնունյաց ցեղը, որպեսզի իբրև բոլոր երկրի հազարապետներ՝ հոգատարությամբ խնամեն աշխարհաշեն՝ աշխարհը կերակրող գյուղացիությանը» (ն. տ.): Պարսկաստանի մեծ հազարապետների պաշտոնը և իրավասությունը տարբեր էին ու ավելի ընդարձակ, քան Հայաստանում[2]: Զինված ուժերի հրամանատարի պաշտոնի առումով բազմիցս գործածված են սպարապետություն, սպարապետ, ստրատելատ, զորավար անվանումները: Սա երկրի ռազմական ուժերի գերագույն հրամանատարի պաշտոնն էր, որը նաև թագավորի առաջին տեղակալն էր:

Պատմիչը գրում է. «Նույնպես և սպարապետության՝ զորավարության գործում ճակատ առ ճակատ նիզակներով կռիվ մղելու համար, նշանակեց փառավոր ու ազնվազգի, աղավնակիր դրոշակներով, արծվի՝ Վարուժանի նշաններով, աներկյուղ ու քաջասիրտ նախամարտիկ, քաջանուն, բարենշան, բարեհամբավ ու բարեգործ, պատերազմական գործերում հաջողակ Մամիկոնյաններ-

[2] Տե՛ս Адонц Н. *Армения в эпоху Юстиниана, Е., 1971, с. 445-446.*

րի ցեղից... և տվեց նրանց զորավարության իշխանություն Մեծ Հայքի բոլոր զորքերի վրա» (և. տ.): Փավստոսը միևնույն անձին երբեմն կոչում է զորավար, երբեմն՝ սպարապետ և երբեմն՝ այս երկու բառով միասին: Սպարապետը պարսկերեն բառ է, որ նշանակությամբ համապատասխանում է զորավարին: Սպարապետը զորաբանակի գլխավոր հրամանատարն էր: Արշակունիների օրոք հայոց զորքի սպարապետներն ընտրվում էին Մամիկոնյան տոհմից: Բուզանդը գրում է. «Վաչե զորավարի որդուն, որ փոքր մանուկ էր, հայրենական զահն ու բարձն էին տալիս, այսինքն՝ Գահնամակի համաձայն՝ հոր գրված բարձր դիրքն ու տեղը, և որը իր պապի անունով կոչվում էր Արտավազդ: Թագավորի առաջ նրա գլուխն էին դնում հոր պատիվը (հավանաբար, նկատի ունի երեք շարք մարգարիտներից վարսակալը կամ պսակը՝ «հակինթապատ» – Ն. Ռ.), նրան տալիս էին սպարապետությունը, որովհետև մեծ վաստակավորի որդի էր, վաստակավոր տոհմից, իսկ նրանց տոհմում ուրիշ չափահաս մարդ չգտնվեց, որովհետև մեծ պատերազմում մեռել էին» (III դպր., գլ ԺԱ, էջ 47):

Հայ նախարարական ազդեցիկ տոհմերի բոլոր ավագները՝ նահապետները, ունեին իրենց պատվո նշանները: Բուզանդը գրքում Արծրունիների տոհմավագի՝ Մերուժան Արծրունու համանման նշանի գոյության մասին գրում է. «Չարագործ մեղավոր Մերուժանը իր զենքն ու զարդը և իր սաղավարտի նշանը շատերին էր տվել, շատերին իր գնդում իր կերպարանքն էր տվել, իսկ ինքը իր նշանները չէր կրում (աննկատ մնալու համար – Ն. Ռ.), …շատերն էին կրում Մերուժանի նշանները…» (V դպր., գլ. ԽԳ, էջ 387): Նրան հետապնդող սպարապետ Մանվել Մամիկոնյանը, ի վերջո, դավաճանի գնդում ճանաչում է Մերուժանին և ասում. «Նա [Մերուժան Արծրունին] իրեն կերպարանափոխել էր և իր նշանները չէր կրում»: Սովորույթի համաձայն՝ հայոց մեծամեծները պատերազմ գնալուց առաջ իրենց տոհմական նշանը և զենքերը պատարագի ժամանակ օրհնել էին տալիս կաթողիկոսին (տե՛ս V դպր., գլ. Դ, էջ 259):

Բուզանդը հիշատակում է նաև մարդպետություն և ասպետություն արքունի պաշտոնները և նրանց տերերին (տե՛ս IV դպր., գլ. Դ, էջ 116): Բացի թագավորի կանանոցի կառավարությունից՝ մարդպետն ուներ մի ուրիշ պաշտոն ևս՝ արքունական կալվածների, բերդերի, ամրոցների վրա հսկողություն (տե՛ս IV դպր., գլ. ԺԴ, էջ 179):

«Մարդպետ» բառը մատենագիրները գործածել են «ներքինապետի» նշանակությամբ և նրա պաշտոնը կոչում էին մարդպետություն: «Հայր» բառը հատուկ անուն չէ, այլ ամեն մի ներքինապե- տի հարգական կոչում: Միայն մի ներքինապետի հատուկ անուն է հիշատակում Փավստոսը՝ Դրաստամատ (տե՛ս III դպր., գլ. ԺԷ, էջ 73 և V դպր., գլ. Է, էջ 315): Պատմիչը այդ պաշտոնը կոչել է նաև ներքինի՝ «արքունիքի ներքին գործերի կառավարիչ» նշանակությամբ (տե՛ս IV դպր. գլ. ԺԴ, էջ 181):

Բուզանդը արքունի պաշտոններից առանձնացնում է նաև թագակապ, թագադիր ասպետությունը: Այդ պաշտոնը IV դարում կրում էր Սպեր գավառից Բագրատունի տոհմը, որի ներկայացուցիչները «Արշակունյաց տոհմի թագավորների թագակապներն ու թագադիրներն էին եղել» (VI դպր., գլ.

ԽԴ, էջ 391): Այս գործակալությունն էր իրականացնում նորընծա արքայի թագադրման և արքունի ապարանքի արարողությունները, ընդունում և ճանապարհում էր օտարերկրյա դեսպաններին:

«Պատմություն Հայոց»-ում հիշատակված է զինդիկապետ պաշտոնը, որը սերում է պարսկական արքունիքից: Բառը, ըստ Հ. Աճառյանի, ունի պահլավերեն ծագում, բայց պարսկական գրականության մեջ չի հիշատակված: Նրա կարծիքով՝ բառի փավստոսյան գործածությունից երևում է, որ զինդիկապետը պարսից մեջ մի անծանոթ զինվորական բարձր աստիճան էր, հավանաբար՝ գնդապետի[3]:

Երկում պարսկական արքունական կամ ռազմական պաշտոններից մեկի հիշատակություն է անդերձապետ անվանումը: Պահլավերեն բառ է՝ anterziat, որի հիմնական նշանակությունն է խորհրդական, andarz բառից, որ նշանակում է խորհուրդ[4]: Այսպես էր կոչվում հին պարսկական բարձրաստիճան այն պաշտոնյան, որը նաև թագավորի խորհրդականի պաշտոն էր վարում: Գոյություն ունեին դերանդերձապետներ՝ արքունի դռան պալատական խորհրդականներ: Բուզանդը հիշատակում է, որ Սագստան (նահանգի) անդերձապետին պարսից Շապուհ թագավորը նշանակում է պարսից զորքի զորագլուխ (տե՛ս IV դպր., գլ. ԽԵ, էջ 243): Հիշատակված է նաև մովան՝ մոգաց անդերձապետի՝ մոգպետի խորհրդականի պաշտոնը: Հր. Աճառյանը անդերձապետը նույնացնում է հանդերձապետի հետ, որը ըմբռնվել է նաև իբրև հազարապետ, արքունի տան վերակացու, իսկ հանդերձապետությունը՝ հազարապետություն:

Անդերձապետը նահանգապետից հետո նահանգի ամենամեծ պաշտոնյան էր: Այս բառը հայերենում գործածված է հանդերձապետ ձևով՝ anderz-ը շփոթելով հանդերձի հետ, ուստի և սխալմամբ հասկացվում է իբրև արքունի հանդերձատան վերակացու[5]:

Պատմիչը, խոսելով Ներսես Մեծ կաթողիկոսի մասին, տեղեկացնում է, որ «նա զինվորական պաշտոնյա էր, [նաև] Արշակ թագավորի սիրելի սենեկապետն էր, Արշակ թագավորի կյանքի բոլոր կարգերին հավատարիմ ներքուստ և արտաքուստ» (IV դպր., գլ. Գ, էջ 109): Սենեկապետությունը բարձր և պատվավոր պաշտոն էր, որի պարտականությունը թագավորական պալատի հսկողությունն էր, արքայի անվտանգության ապահովումը: Սենեկապետները հաճախ թագավորների մերձավոր խորհրդականներն էին լինում:

Բուզանդի երկում կարդում ենք. «Պարսից Շապուհ թագավորը իր Զիկ նվիրակապետին արձակեց Հայաստան պատերազմի, և նրանց առաջնորդ է նշանակում Մերուժանին» (IV դպր., գլ. ԼԵ, էջ 235): Նվիրակապետը պարսկական արքունական պաշտոն էր, որը չենք հանդիպում հայ

---

[3] Տե՛ս **Հ. Աճառյան,** *Հայոց արմատական բառարան, հ. II, Ե., 1973, էջ 96:*

[4] *Նույն տեղում, հ. I, Ե., 1971, էջ 189:*

[5] *Նույն տեղում, էջ 188-189:*

արքունական պաշտոնների ցանկում: Հայերենում այն մի քանի նշանակությամբ է գործածված՝ ա) պալատական պաշտոնյա, որը արքունիք կանչված անձանց ներկայացնում է թագավորին, բ) որը, տան առջև կանգնած, ընդունում է հյուրերին, գ) որը, թագավորի կամ իշխանի առջևից գնալով՝ փողոցներում ճանապարհ է բացում, դ) որը մի պետի կողմից հրավիրակ կամ պատգամավոր է ուղարկվում ուրիշ տեղ (ինչպես օրինակ՝ կաթողիկոսի նվիրակները), ե) որն ուղարկվում է վանքի համար պտղի հավաքելու[6]: Պատմիչը ակնարկներ ունի նաև շապստան տակառապետ, համբարակապետ, դասապետ, փուշտիպան, ոստիկան, բերդապահ, եպիսկոպոսապետի դռան գործակալ, աշխարհաժողով և այլ անվանումների մասին: Բուզանդը հիշատակում է, որ Փառանձեմ թագուհու անարգվելուց և երկրի բնակչության գերեվարվելուց հետո «Հայոց աշխարհում մնացին ոստիկանները և վերակացուները՝ երկրի մնացորդ ժողովրդին հպատակեցնելու համար…» (IV դպր., գլ. ԾԶ, էջ 269): Ոստիկան (պահլավերեն՝ ostikan) բառը, ըստ Հ. Աճառյանի, նշանակում է հավատարիմ, վստահելի: Հայերենում ոստիկան էին կոչվում թագավորին հավատարիմ և վստահելի մարդիկ, որոնցից թագավորը նշանակում էր վերակացու, կուսակալ որևէ գավառի կամ աշխարհի վրա: Այդպես էին կոչվում նաև արաբների կողմից Հայաստանում նշանակված կուսակալները[7], որոնք պարսկական տիրապետության շրջանում կոչվում էին մարզպան: Բերդապահները հավատարիմ մարդիկ էին, որոնց էր վստահվում նաև արքունիքի գանձերի պահպանությունը: «Պապ թագավորը,- գրում է նա,- առավ բոլոր այն ամուր բերդերը, որ գրավել էին պարսիկները, տիրացավ և Դարոնք բերդին Կոգի երկրում, որտեղ պահվում էին Արշակունիների գանձերը, որովհետև բերդապահները հավատարիմ մարդիկ էին» (V դպր., գլ. Ա., էջ 289):

Բուզանդի գրքում տեղ է գտել եկեղեցական մի պաշտոն, որ կոչվում էր եպիսկոպոսապետի դռան գործակալ. «Այս ժամանակներում ապրում էր Փավստոս եպիսկոպոսը, որ Ներսես եպիսկոպոսապետի ժամանակ նրա դռանն էր լինում իբրև գործակալ: Նրա հետ՝ ներքին խորհրդական էր և Զորթը, որովհետև հայրապետի ձեռքի տակ, նրա ներքին խորհրդարանում, տասներկու եպիսկոպոս կային, նրան աթոռակից, գործակից և խորհրդակից, բացի գավառների բոլոր եպիսկոպոսներից, որոնք նրան ենթարկված էին, բայց այս երկուսը այն տասներկու եպիսկոպոսներից էին: Սրանց էր հանձնված աղքատանոցների տեսչությունը, և նրանք ամեն բանում հավատարիմ էին նրա ժամանակ» (VI դպր., գլ. Ե, էջ 403-405):

Փաստորեն, եպիսկոպոսապետի դռան գործակալի պարտականություններն էին եպիսկոպոսի ներքին հարցերով խորհրդական լինե- լը, նաև աղքատանոցների տեսչությունը: Գրքում խոսվում է նաև երկրի հրատապ հարցերի՝ հատկապես պատերազմի և խաղաղության վճիռ կայացնելու համար թագավորի հրամանով հրավիրված աշխարհաժողովների մասին:

---

[6] *Նույն տեղում, հ. III, Ե., 1977, էջ 470-471:*

[7] *Նույն տեղում, էջ 570-571:*

Շատ դիպուկ ու հստակ են ներկայացված Արշակ թագավորի մոտ ժողովի հրավիրված մասնակիցները. «Նախարարական ցեղերի ու տոհմերի մեծամեծ նախարարները, գնդերի և դրոշակների տերերը, բոլոր սատրապները, նախարարներն ու ազնվականները, պետերը, իշխանները, զորավարներն ու սահմանապահները» (IV դպր., գլ. Բ, էջ 109): Այդպիսիները Բուզանդի երկում անվանված են «մեծամեծ ավագանի, աշխարհակալ՝ աշխարհատեր նախարարներ, որոնք բյուրավոր և հազարավոր զինվորների տեր էին» (III դպր., գլ. Ը, էջ 33): Նույնիսկ ռամիկ մարդիկ էին մասնակցում աշխարհաժողովին (III դպր., գլ. ԻԱ, էջ 87):

Պատմիչը գրում է նաև, թե արքայի հրամանը ժողովրդին էր հասցվում մունետիկների միջոցով (IV դպր., գլ. ԺԲ, էջ 169):

Հարկ ենք համարում անդրադառնալ արքունական պատիվ երեվույթի հիշատակությանը (տե՛ս V դպր. գլ. ԼԸ, էջ 375): Պատիվը, որ արքայի կողմից շնորհվում էր նախարարին գահի հետ միասին, արտաքին մի նշան էր, իբրև մի հայտնի զարդարանք կամ զգեստի մաս և այլն: Բուզանդն առավել հանգամանորեն է նկարագրում այն. «Պարսից թագավորը Սուրենի ձեռքով Զարմանդուխտ (Արշակ III արքայի) տիկնոջ համար ուղարկեց թագ և պատմուճան և թագավորական վառ (զարդարուն քող կամ ասեղնագործած արքայական դրոշակ), և երկու մանուկների՝ Արշակի և Վաղարշակի համար թագեր: Նույնպես Մանուել սպարապետի համար ուղարկեց թագավորական պատմուճան, մի սամույր և գլխի պատիվ՝ ոսկուց և արծաթից շինած գարդմանակ, և գլխի պատվի վրա, գագաթում, արծիվի ետևից, թագի կապը՝ աշխարավանդ, հանգույցը, և կուրծքին պատիվ՝ ապիզակ, ինչպիսին կրում են թագավորները, նաև շիկակարմիր խորան, խորանի վրա արծվի նշան, և մեծամեծ սրահակներ ու կապույտ երկնագույն հովանոցներ: Նաև սեղանի ոսկի սպաս էր ուղարկում Մանուել Սպարապետին և անձնապես իր կողմից մեծ իշխանություն էր տալիս նրան Հայոց աշխարհի վրա» (V դպր. գլ. ԼԸ, էջ 375): Նման պատիվները կրելու իրավունքն ունեին միայն տանուտեր նախարարները՝ նահապետները, արքաները: Դրանք համարվում էին նաև փառքի և համբավի պատվո նշաններ: Պատիվը խորհրդանշում էր նաև տոհմական պաշտոնը, ասենք՝ զորավար-սպարապետությունը, որը Բաթ Սահառունուց խլում է Մանվել Մամիկոնյանը՝ համարելով, որ այն իրենց տոհմական պատիվն է եղել (տե՛ս V դպր., գլ. ԼԷ, էջ 367): Սրանից հետևում է, որ այն ժառանգաբար կրում էին նախարարի սերունդները: Պատվի և նրա տեսակների մասին, բացի Բուզանդից, մեզ հասած մատենագրական տեղեկությունները շատ քիչ են: Խորենացին հիշում է Բագարատին շընորհված պատիվը. երեք շարք մարգարիտներից վարսակալ՝ առանց ոսկու և արծաթի, մեկ այլ տեղ՝ «հակնթապատ, երկու ականջներին գինդեր, մի ոտքին կարմիր կոշիկ, ոսկեղեն գդալ և պատառաքաղ և

ոսկեղեն բաժակ»[8]:

Ուշագրավ է, որ Բուզանդը առանձին դեպքերում ակնարկներ ունի նաև հարևան պարսկական և բյուզանդական հասարակական աստիճանակարգերի մասին: Օրինակ, նա դրանց թվին է դասում սոփեստներին՝ իմաստուններին, ճարտարախոսներին և մագիստրոսներին՝ պետական բարձր պաշտոնյաներին Բյուզանդական կայսրությունում (տե՛ս IV դպր., գլ. Ժ, էջ 159):

Բուզանդը ակնարկ ունի նաև հարկի և տուրքի՝ պտղի և տասանորդի հարկատեսակների վերաբերյալ. «Զկարգն պտղոյն և տասանորդացն» (V դպր., գլ. ԼԱ, էջ 349, 353): Փավստոսը հստակ չի ասում, թե որն է պտուղ, և որը՝ տասանորդ: Նկատենք, որ դեռ շատ հին ժամանակներից սովորություն էր դարձել, որ գյուղացիները իրենց բերքից կամավոր տուրք էին վճարում վանքերին, որոնք այս տուրքերը հավաքելու համար հատուկ մարդիկ էին ուղարկում գյուղերը հունձքի ժամանակ: Տասանորդը բերքի մեկ տասներորդն էր, որ հանձնվում էր պետությանը կամ հողատիրոջը, բայց ոչ վանքին: Վերջիններիս համար տրվող կամավոր տուրքը պտղի էր կոչվում, որ հարատևեց մինչև XX դար՝ հայ պետականության վերականգնումը: Քանակությունը սահմանված չէր, այլ կախված էր նվիրողների կամքից և մանավանդ պտղի հավաքող հոգևորականի ճարտարությունից: Պտղի տալիս էին թե երկրագործական և թե անասնապահական բարիք- ներից: Ունենք մի հաղորդում ևս: Պապ թագավորը «եկեղեցուց կտրեց այն հողը, որ Գրիգոր մեծ քահանայապետի ժամանակ տվել էր Տրդատ թագավորը Հայոց բոլոր աշխարհում եկեղեցու սպասավորության ու պաշտամունքի համար, որովհետև յոթ հողից հինգը կտրում էր հօգուտ արքունիքի և միայն երկու հող էր թողնում: Եվ հողերի հաշվով ամեն մի գյուղում երկու-երկու պաշտոնյա էր թողնում, մի երեց և մի սարկավագ, իսկ մյուսներին, այսինքն՝ երեցների ու սարկավագների եղբայրներին ու որդիներին իր հպատակության էր ենթարկում» (V դպր., գլ. ԼԱ, էջ 353): Փաստորեն, ըստ պատմիչի հաղորդման, այս արտոնությունը սահմանափակվեց միայն քահանաների ու սարկավագների համար: Այս երկու հողի տարածությունն այնքան պետք է լիներ, որ բավարարեր քահանաների և սարկավագների ու նրանց կանանց կարիքը՝ հաշվելով մարդ ու կնոջը մի հող (տե՛ս էջ 442, ծանոթ., 199):

Պատմագիրը ավելի քան հանգամանալի է ներկայացնում կնիքի, թագավորական երդման մասին հաղորդումը: Ինչպես գիտենք, հնուց ի վեր մատանին, բացի զարդ լինելուց, գործածվել է նաև որպես կնիք, որով հաստատում էին պետական-քաղաքական նշանակություն ունեցող հրամանագրերը, փաստաթղթերը և նամակները: Այս սովորությունը հանդիպում է աքեմենյան և սասանյան արքաների մոտ, որոնք ունեին նաև «Վարազ նկարագիր մատանի»:

Վարազագիր մատանին մատի վրա կրելու օղ էր, որի մեջ ագուցված էր մի թանկագին քար՝ վրան փորագրված տիրոջ անունը, որը և ծառայում էր

---

[8] **Մ. Խորենացի,** *Հայոց պատմություն, թարգմանություն, ներածություն և ծանոթագրություններ ակադ. Ստ. Մալխասյանի, Ե., 1961, գլ. Բ, նաև Է, ԽԷ:*

իբրև կնիք: Նրա վրա փորագրված էր լինում վարազ՝ պարսից թագավորների գերբը: Այս տիպի մատանիները շատ հաճախ մատներին չէին դնում, այլ պահում էին արքունական գանձարանում. այդ մասին հիշում են մեր պատմիչները՝ «ի սնարս թագաւորին զարքունական մատանին բարձեալ ունէր»[9]:

Կնիք-մատանիները իրենց մատներին դրել են ոչ միայն թագավորները, այլև հայ նախարարները. Վարդանանց երդումը կնքված է եղել Վասակ Սյունեցու և ուրիշ նախարարների մատանիներով[10]:

Հայ թագավորները, ըստ Բուզանդի, երդման արարողությունը կատարում էին Ավետարանի վրա: Պարսից արքա Շապուհը բռնադատում էր Արշակ II արքային, որ իրեն հավատարմության երդում տա. «Համաձայնի՛ր, ասում էր նա, և քո հավատով երդվի՛ր, որ ինձ չես խաբի, չես դավաճանի»: Արշակը, շարունակում է պատմիչը, «երբ սաստիկ ստիպմունքից նեղն ընկավ ու շվարեց՝ ապա կանչեցին Տիսբոն քաղաքի եկեղեցու երեցներին, որոնց գլխավորի անունն էր Մարի. բերել տվին Հայաստանից Սուրբ Ավետարանը, և Պարսից Շապուհ թագավորը երդում էր անել տալիս Հայոց Արշակ թագավորին աստվածային Ավետարանի վրա, որ նրան չի խաբի, չի դավաճանի, այլ հաստատ կմնա իր ուխտին և նրա հետ դաշինքը անխախտ կպահպանե» (IV դպր., գլ. ԺԶ, էջ 197): «Իսկ այն սուրբ Ավետարանը, որի վրա Արշակ թագավորը երդվեց՝ կապել էր տալիս երկաթե լարերով և իր մատանիով կնքելով՝ հրամայում էր գանձարանում զգուշությամբ պահել» (IV դպր., գլ. ԺԶ, էջ 199):

Այդ նույն կերպ Արշակը Շապուհից խնդրեց «ուխտի հավատարիմ երդում, որ անկասկած լինելով գնա: Շապուհը Պարսից թագավորության հավատարիմ երդման օրինակով՝ բերել տվեց աղ, կնքեց վարազագիր մատանիով և ուղարկեց (Արշակ թագավորին) ասելով որ եթե այդ երդումից հետո էլ չգա, ապա թող պատրաստվի պատերազմի» (IV դպր., գլ. ԾԳ, էջ 255): Վարազագիր մատանին պարսից թագավորի անձական կնիքն էր, և նրանով կնքված աղը ամենահաստատ անսուտ երդման նշան էր: Վարազ անունը իբրև պատվանուն շատերը կցում էին իրենց անուններին, ինչպես՝ Վարազ-Վաղան, Վարազ-Շապուհ, Վարազ-Ներսեհ, Վարազդատ և այլն: Պարսից թագավորները երդվում էին արեգակի, ջրի ու կրակի վրա (տե՛ս IV դպր., գլ. ԺԶ, էջ 199):

Հայկական մեկ այլ սովորույթով բարձրաստիճան պետական և ռազմական գործիչները երդվում էին կաթողիկոսի աջը բռնած (V դպր., գլ. Դ, էջ 299):

Առավել հանգամանորեն է ներկայացված հայոց բանակը: Ընդարձակ նկարագրություն կա զորատեսակների և զինվածության մասին: «Արշակ թագավորը հրաման տվեց իր Վասակ սպարապետին՝ գունդ գումարել, զորք պատրաստել: Վասակը շատ շուտով կատարում է թագավորի հրամանը – կազմակերպում է չորս հարյուր հազար մարդուց բաղկացած լավ սպառազինված զորք՝ ընտիր ռազմիկ մարդկանցից, արիասիրտ կռվողներ,

---

[9] **Հացունի Վ.,** *Պատմութիւն հին հայ տարազին, Վենետիկ, 1924, էջ 296:*

[10] *Տե՛ս* **Ղ. Փարպեցի,** *Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1914, էջ 21:*

որոնք զինված էին նիզակներով, սրերով, աղեղներով, վաղրերով, սակրերով, անսխալ խփող և ուժեղ նետաձիգներ, ախոյանների առաջ տեղի չտվող կռվողներ, ամբողջ հեծելազորքը պահպանակներով, զրահավորված սաղավարտներով պաշտպանված, իրենց դրոշներով, նշաններով և բազմաձայն պատերազմական փողերով» (IV դպր., գլ. Ի, էջ 205):

Ինչպես նկատում ենք, պատմիչը մանրամասն ներկայացնում է հայոց բանակի մարտական զենքերի տարատեսակները: Դրանց շարքին են պատկանում սակրը, վաղրը և սրի մի այլ տեսակ՝ ճիկռը, որոնք պատերազմի ժամանակ գործածվել են իրենց սուր բերանով ծանր հարված հասցնելու համար: Տապարանման երկբերան սակրը մեր պատմիչները անվանել են «կտցավոր սակր»: Ըստ երևույթին, սակրը և վաղրը տարբեր զենքեր են եղել, քանզի Փավստոս Բուզանդը գրում է, որ հայկական բանակի առանձին զորագնդեր էին կազմել «սակրավորները» և «վաղրավորները»:

Բուզանդը սաղավարտը անվանել է երկաթե գլխանոց: Իշխանական սաղավարտները տարբերվել են շարքային զինվորների սաղավարտներից՝ ունենալով տոհմական նշան: Օրինակ՝ Մանվել Մամիկոնյանի սաղավարտն ունեցել է արծվի տոհմական նշանը: Ասենք նաև, որ հայկական զորքի թե՛ հետևակը և թե՛ հեծյալը զինված էին վահաններով, միայն թե հեծյալների վահանները չափերով ավելի փոքր էին: Վահանով պաշտպանվում էին ոչ միայն անհատապես, այլև զինվորների առանձին խմբեր, անսպասելիորեն վահանների տակ շղթայով ամուր «բերդեր» էին պատրաստում թշնամու դեմ՝ նման պարսկական բանակի փղերի պատնեշին:

Պատմիչը հայոց բանակի թվաքանակի մասին գրում է, թե այն Պապ արքայի օրոք 90000 էր՝ «90 հազար ընտիր մարտիկ էին, լավ զինված, նիզակները ձեռքերին, վահաններով, չհաշված ասպարակիրներին» (V դպր., գլ. Ե, էջ 307, 371):

Նկարագրում է նաև հայոց բանակի ամրակուռ սպառազինությունը. «Ոտքից մինչև գլուխ երկաթապատ, ամրակուռ և անխոցելի զինվորություն, ուժեղ երիվար և երիվարի անդրդվելի սպառազինություն» (V դպր., գլ. ԼԷ, էջ 369): Այստեղ խոսքը Մանվել Մամիկոնյան սպարապետի սպառազինության մասին է: Ի հակադրություն գուգազի[11]՝ անկազմակերպ, անկանոն զորքի՝ այդպիսի զինվածությամբ աչքի էր ընկնում Մատենիկ գունդը (տե՛ս III դպր., գլ. Ը, էջ 33):

Բուզանդը հիացմունքով է խոսում Հայոց զորքի գործած սքիսրանքների մասին, որը մարտնչում էր հանուն իր երկրի թագավորի՝ Արշակ արքայի: Ներկայացնում է բյուզանդական զորական միավորները՝ լեգեոն անվամբ, որը տարբեր ժամանակներում ընդգրկում էր 3600-6000 կռվող զինվոր: Նրանց մեծ մասը ծանր սպառազինված էր լինում, փոքր մասը՝ թեթև (տե՛ս V դպր., գլ. Գ, էջ 309): Պատմագիրը մի առիթով պարսից բանակն անվանում

---

[11] **Հ. Ամատոյան,** *նշվ. աշխ., հ. I, էջ 587:*

է Կարավան, որը հայերենում գործածվում է հիմնականում «ճանապարհորդների խումբ» նշանակությամբ՝ զինված պահապանների ուղեկցությամբ:

Պատմիչը, լինելով արքայական կարգերի, թագավորի իշխանության ամրապնդման ջերմ ու համոզիչ կողմնակից, մեծ համակրանքով է խոսում այն սխրանքների մասին, որ անմիջականորեն կատարվում էին հանուն արքայի և երկրի. «…նիզակավորների գնդերը մոլեգնաբար հարձակվելով՝ իրենց ձիերի վրայից հարվածելով՝ քաջությամբ գետին էին գլորում իրենց ախոյաններին Պարսից Շապուհ թագավորի դեմուդեմ: Երբ գետին էին գլորում՝ Հայոց բոլոր զորքերը քաջալերական ձայնով աղաղակում էին – «Քաջ Արշակի համար»: Ամեն անգամ որ այդ պատերազմում մի ախոյան էին սպանում՝ նրան էին նվիրում, իրենց նախկին թագավոր Արշակին, ասելով. «Մեր Արշակ թագավորին մատաղ եղիր» (V դպր., գլ. Ե, էջ 309):

Հայոց բանակի ռազմավարությունից և գործած քաջագործություններից ցնցված՝ գերի ընկնելուց մազապուրծ պարսից Շապուհ արքան (Շապուհ II – 309-379) իր զարմանքն է հայտնում. «Զարմացել եմ ես, ասում էր նա, իմ տեսածի վրա: Մանկությունից ի վեր միշտ կռվի ու պատերազմի մեջ եմ եղել, շատ տարի է, որ թագավոր եմ դարձել, և տարի չեմ անց կացրել առանց կռվի, բայց ջերմ կռիվ այս էր (խոսքը 371 թ. Զիրավի ճակատամարտի մասին է – Ն. Ռ.), որին այս անգամ պատահեցի: Որովհետև երբ Հայոց նիզակավորները առաջ էին գալիս՝ այնպես էին հարձակվում, ինչպես մի բարձր լեռ կամ ինչպես մի հաստ՝ հզոր և անշարժ աշտարակ. իսկ երբ մենք նրանց փոքր-ինչ վանում էինք, նրանք ապաստանում էին հոռոմների լեգեոնների մեջ, որոնք իրենց կից առ կից վահանները բաց անելով նրանց ներս էին ընդունում ինչպես մի պարսպապատ ամրոցի մեջ: Եվ այնպես փոքր-ինչ շունչ առնելով՝ նորից դուրս էին գալիս ու կռվում, մինչև որ արյաց զորքերն սպանեցին:

Մի ուրիշ բանի վրա էլ եմ զարմացած – Հայկական գնդի միասիրտ հավատարմության և տիրասիրության վրա. որովհետև այսքան տարի է, որ նրանց տերը՝ Արշակը, կորած է նրանց համար, բայց նրանք նրանով էին քաջալերվում պատերազմի ժամանակ: Երբ իրենց ախոյաններին գլորում էին՝ միշտ ասում էին. «Արշակի համար», իսկ նա նրանց մեջ չէր, բայց նրանք իրենց սիրուց և տիրասիրությունից, որ ունեին իրենց բնիկ տիրոջ նկատմամբ՝ ամեն մի ախոյանի, որին սպանում էին՝ նրան էին նվիրում» (V դպր., գլ. Ե, էջ 309-311):

Զինվորական մի սովորույթի մասին ևս: Հին ժամանակ սովորություն կար, որ պատերազմից դարձող զինվորները բերում էին իրենց սպանած թշնամիների գլուխները՝ իբրև ապացույց իրենց գործած քաջության: Որքան շատ լինեին գլուխները, այնքան մեծ էր լինում բերող զինվորականի պարծանքն ու պատիվը: Սրանից է մնացել մեր ժողովրդական լեզվի մեջ «գլուխ բերել» արտահայտությունը, որ նշանակում է. «Ի՞նչ ես պարծենում, հո թշնամու գլուխ չե՞ս բերել»: Զիրավի ճակատամարտի առիթով Բուզանդը գրում է. «Երբ Հայոց

բոլոր զորքերը ետ դարձան՝ թիվ չկար ախոյանների այն գլուխներին, որ Հայոց Մուշեղ քաջ զորավարը բերել էր Հայոց Պապ թագավորի առաջ: Այնպես էլ բոլոր նախարարներն ու մեծամեծները և ամբողջ զորքը, ամեն մեկն իր չափի» (V դպր., գլ. Դ, էջ 305):

Պատմիչի երկում ուշագրավ տեղեկությունների ենք հանդիպում մեր երկիր ներխուժած և սարսափելի ավերածություններ, կողոպուտ ու գերեվարություններ գործած մասքուտների զորատեսակների վերաբերյալ. «Թիվ չկար նրա հեծյալ գնդերի բազմության և ոչ հաշիվ կոպալավոր հետևակ զորքի, որովհետև իրենք էլ չէին կարողանում իրենց զորքը համարել» (III դպր., գլ. Է, էջ 29): Ուշագրավ է նաև այն, որ ռազմատենչ այդ ցեղի զորքը բաղկացած էր ծանր մահակներով զինված հետևակից: Պատմիչը հիշատակում է նաև գուգազը՝ անկանոն զորքի ամբոխը, որը օգտագործվում էր առանձին նպատակներով: Այսպես, կարդում ենք. «Մեռածների (մասքուտների – Ն. Ռ.) հոտից երկիրը լցվել էր գարշահոտությամբ՝ հրաման տվին՝ աշխարհից գուգազ հանել, դիակները թաղել, վրան քարերով ծածկելով, մի գուցե երկիրը ապականվի մեռելների գարշահոտ շարավից» (նշ. տ., էջ 31): Գուգազ հավաքում էին ռամիկներից և շինականներից (նշ. տ., էջ 29, 31):

Այսպիսով, ամբողջությամբ վերցրած, Բուզանդը V դ. այն պատմագիրներից է, որ հանգամանալի հիշատակություններ ունի ոչ միայն հայոց տնտեսական կենցաղի և նյութական մշակույթի, ընտանեկան-հասարակական կենցաղի, հայոց հոգևոր մշակույթի՝ ժողովրդական հավատալիքների, հնագույն պաշտամունքային երեվույթների, այլև պետական կառավարման համակարգի ու բանակի վերաբերյալ:

ФАВСТОС БУЗАНД О ГОСУДАРСТВЕННОЙ СИСТЕМЕ УПРАВЛЕНИЯ В АРМЕНИИ И ОБ АРМИИ

НААПЕТЯН Р. А.

Резюме

“История Армении” Фавстоса Бузанда, являющая собой исключительную историографическую ценность, богата этнографическими описаниями, которые охватывают едва ли не все сферы национальной жизни – материальную и духовную культуру, быт, семейные и общественные связи и т. д.

В труде Бузанда (V в.) отражена система государственного управления и структура армии в раннесредневековой Армении, точнее, в период царствования Аршакидов, показана иерархия государственных должностей, обычно наследовавшихся представителями тех или иных аристократических родов, а также представлена система налогообложения.

PAVSTOS BUZAND ON THE SYSTEM OF PUBLIC ADMINISTRATION AND THE ARMY IN ARMENIA

R. NAHAPETYAN

Abstract

The “History of Armenia” by V century chronicler Pavstos Buzand not only has a unique historiographic value but is also rich in ethnographic materials, which cover almost all the areas of Armenian ethnography – material and spiritual culture, lifestyle, family and social relationships.

The article explores those ethnographic materials found in his work, which relate to the system of public administration and the Armenian Army of the early middle ages in Armenia, and particularly in the period of Arshakuni Kingdom. The posts are presented according to the scale of ranks, which were either hereditary. Brief reference is made to the system of taxation and types of taxes.

The author attaches special importance to Buzand’s descriptions of the Armenian Army. The chronicler provides a detailed description of the service, military branches, military status, fighting qualities, etc.